

Բայց եթէ որ մանկավարժները այս շնչին բառերին նշանակութիւն չեն տալիս, մենք խորհուրդ կտանք այն մայրերին, որոց կվիճակուի կարգալ այս տողերը այդ շնչին առարկաները անպէտք չը համարեն. այլ հետեւեն, որ իրանց մանուկները դռնէ տանը աջ կողմը և կամ երեսը պատուհանին դարձրած չըսպարապէին և չաշխատէին կէս լոյս և կէս մութ ժամանակ. Որովհետեւ այն պայմանները, որք վնասակար աղղեցութիւն են գործում դպրոցի մէջ, նոյն աղղեցութիւնը կարող են գործել մանուկների վերայ և տանը, իսկ մենք բոլորս էլ, մեր զաւակը տալով դպրոց ուսանելու, դադարում ենք այլ ևս նորա վերայ հոգ տանելուց և մեր առ նաւնեցած պարտքը միայն այն ժամանակն ենք մտարերում, երբ մանուկը չափից դուրս չարանում է. կամ չաղափանց վատ հետքեր է բերում իւր հետ դպրոցից և կամ վերջապէս հիւանդանալով՝ բժշկի օգնութեանն է կարօտում. Ըստ մեծի մասին շատ դեպքերում մեր զաւակները իրանց դասերը պատրաստում են պիտի, որտեղ նորա ցանկանում են և կամ որտեղ էլ պատահում է, մինչդեռ մենք մեր ձեռքից եկած բոլոր միջոցները չըպիտի ինայէինք, որ դպրոց զնացող մանուկը իւր դասերը տանը պատրաստելու համար, գտնէր մեզ մօտ ամենայսրմար և ամենալնտիր տեղ. (Առաջակա ի մ կ).

(Թարգմ.) Ս. Տարգուեանց.

ԱԶԳԱՅԻՆ

Կ. ՊՈԼԱԾՈՅ ՀԱՅՆ.

— Կրօնական ու Քաղաքական ժողովներն երկուշարթի խառն նիստ ըրին. Այս նստին մէջ համաձայնութեամբ բնդունուեցան ու վաւերացան Կրօնական ժողովոյ հետեւեալ երկու որոշմունք. Կրօնական տեսչի լնտրութիւնն ու նորա 500 դրաւշ ամսաթոշակն, Քահանայից պսակադրամին և հարսանեկան ուրիշ իրաւանց ուղղակի Պատրիարքարանի կողմանէ գանձուիլը. Սոյն նստին մէջ որոշուեցաւ վերստին դրել ի Տիվրիկ և պահանջել աղգային Ա-ագրֆներու հաշիւը, որպէս զի Ա-ագրֆի արդեանց գործադրութեան համար արժանն անօրինուի. Նոյն օրը վաւերացաւ Մալաթիոյ Առաջնորդ Տ. Իսահակ եպիսկոպոսի լնտրութիւնն և Ս. Պատրիարք Հ. բ. յանձնաւեցաւ պէտք եղած հըամանագիրն առնուլ Բ. Դրնէն.

— Դատաստանական խորհրդոյ Երկու պակասեալ անդամնց տեղ ընտրեցան Տ. Արիստակէս Քահանայ Ճիղմէճեան և Յարութիւն Էֆէնահի Գընտըգլեան.

Կրօնական Տեսուչ նշանակեցաւ Պալաթիոյ քարողիչ Սարանեան Տ. Յովակի Մ. Վարդապետն. իսկ այլ առարկայից՝ Պ. Կարապետ Խոյսուճեան.

Հընանի իշն-ի-ն ժողովոյ. — Այս շարժու Պատրիարքարանէն առ մեզ ըրկուեցաւ այս վերնագրով տետրակ մը. յորում կը տեսնուին Հրահանգ տուեալ առ համայն եկեղեցական ու աղգային պաշտօնէութիւնս որ ի մայրաքաղաքիս և ի զաւառս. և պարտաւորիշ եղանակաւ յանձնարարեալ է գործադրել զայնս յօգուտ Եկեղեցւոյ և Եղդի, և աղդ արարեալ է թէ զանցառուք պիտի պատժուին օրինաց խստութեամբ. Հրահանգ տրուած է

որ եկեղեցիք վայելուչ ու մարուր պահուին ի գաւառս մանտանդ ի զիւ-
յօրէս եկեղեցեաց գաւիթք շգործածուին իրրե ամարանոց, սեղանը վայե-
լուչ պարզութեամբ զարդարուի անօծ պատկերներ իրրե զարդ շդնել սե-
ղանի վերա, եկեղեցական անօժներն սպասներն և այլ ամենայն ինչ մար-
րութեամբ ու վայելչութեամբ գործածել յապահովի պահել սրճանագրե-
լով անուամբ, կշռով, տեսակաւ և քանակութեամբ, աշխատիլ եկեղեցա-
կան անօմոց և գոյից առաւելութեան, և յարտակարգ հարկի վաճառման
տեղեկագրով դիմել առ կեդրոնական վարչութիւն արգելուլ ժողովրդեան
մանաւանդ կանանց՝ եկեղեցւոյ դասին մէջ կանգնիլ արգելուլ Ս. Պատա-
րագի սպասաւորողաց, մոմակալ տղայոց՝ ուսնամանօք և առանց հողաթա-
փի ի բհմ ելնել։ Հրահանդ տրուած է որ եկեղեցական համայն պաշտօ-
նեութիւնը միակամ հոգ տանին եկեղեցական պաշտամանց երկիւղած պատ-
կառանօք, լոռութեամբ, պարկեշտութեամբ և ամենայն վայելչութեամբ
կատարուելուն արգելեալ են ձեւակերպութիւնը և դաշնակահարութիւնը։
Յանձնարարեալ կրօնի ուսումն ոչ միայն պարտաւորիչ առնել այլ և նա-
խադասել քան զամենայն ուսմունս Հրահանգներ կան նաև քարովչաց,
քահանայից, պանդուխտ քահանայից ու ընծայացուաց, մղրտութեան խոր-
հրրդոյ կատարման ամուսնութեան, յուղարկաւորութեան, գերեզմանա-
տանց համար։ Հրահանգներ կան միանգամայն սոյն հրահանգաց հսկող
պաշտօնէից և ընդհանուր տեսչին համար։ Ի վերջոյ ծանուցեալ է թէ
խիստ տնօրինութիւնը պիտի լինին այն անարդար պաշտօնէութեանց հա-
մար՝ որ յանուն Ս. Կրօնի գանձուած, յանուն Ս. Եկեղեցւոյ հաւաքուած,
յանուն բարեպաշտութեան կտակեալ նուէրներէն կրղլանան բաժին հանել
Ս. Եկեղեցւոյ պայծառութեան ու պիտոյից կրօնի ուսման և զարդացման
համար։

Այս ամենայն հրահանգաց, յանձնարարութեանց ու ազդարարութեանց
նպատակն է հետեւիլ ուղղութեան ու արդարութեան, նախանձախնդիր լի-
նել ընտանեկան համեստութեան ու խաղաղութեան, զարդացնել կրօնի ու
բարոյականի սէրն, և հոգ տանիլ զաւակաց ուսման և բարւոք դաստիարա-
կութեան։ Այս հրահանգք նոր չեն խմբագրեալ են պատրիարքական կոն-
դակներէ և նախորդ կրօնական ժողովոց շրջարերականներէ, և ներկայ Կրօ-
նական ժողովը պարտ անձին համարած է կոչումն ընել առ ի գործադրու-
թիւն։ Արդարե կարեոր ու օգտակար են ամենքն ալ և բաղձալի է որ ան-
թերի գործադրուին։

(Փ-ՆԶ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հնորհակալութեամբ ստացանք

Ա. Մովսէս Խորենացի և Հին Հայկական Ա. Էպ. գործ Մ. Եմին
Թարգմանեց Ռուսերէնից Խաչատուր Յովհաննիսեան

Թիֆլիս, Յովհաննէս Մարտիրոսեանի Տպարանում, գինն է 50 կոպէկ։

Բ. Սիրոյ Զղջումն ։, Թարգմանեց Պետրոս Տէր Յովհաննիսեանց։
Հրատարակութիւն Աւետիք Պապիանցի տպուած է Շուշւոյ Հայոց Հոգեոր
տեսչութեան տպարանում։ գինն է 10 կոպէկ։

Գ. Ռուսավում (Դօնի վերայ) Պ. Յ. Տէր Արքահամեանի խմբագրութեամբ
Հրատարակվող “Դօնская пчела”, լրագրի տարւոյս առաջին համարի հետ
շնորհակալութեամբ ստացանք Ռուսերէն ընդարձակ Օրացոյց, որ բոլոր բա-
ժանորդներին է ուղարկվում, իսկ հատով ծախվումէ 50 կոպէկի։

Տարւոյս Յունիքար ամսից սկսած Հրատարակելու է Արքնայի Մխիթա-
րեան հարց խմբագրութեամբ ։ Հանդէս ամսօրեայ բարոյական, ուսումնա-
կան և արտեստական ամսագիրը։